ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ.

ԱԼՏՄԵԴ ԲԿ

ԱլտՄեդ» վերականգնողական և ավանդական բժշկության կենտրոն. Այս մասնագիտացված կլինիկայումաշխատում են բարձր որակավորում ունեցող, արտերկրում վերապատրաստում անցած բժիշկներ հետևյալ մասնագիտություններով՝ նյարդաբանություն, ռևմատոլոգիա, էնդոկրինոլոգիա, անեսթեզիոլոգիա, գաստրոէնտերոլոգիա, դիետոլոգիա-նուտրիցիոլոգիա, մաշկաբանություն-կոսմետոլոգիա, ֆիզիոթերապիա, կինեզիոթերապիա, մերսում, մանուալ թերապիա, ռեֆլեքսոթերապիա, հոմեոպատիա, հոգեբանություն, լոգոպեդիա:

«ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում անց են կացվում բազմաթիվ ախտորոշիչ հետազոտություններ, որոնքթույլ են տալիս ստանալհիվանդիֆիզիկականու հոգե-հուզական վիճակի լիարժեք պատկերը և հիվանդությունը բացահայտել ամենավաղ շրջանում, հաճախ մինչև հիվանդագին ախտանշանների հայտնվելը՝

— Օստեոդենսիտոմետրիա՝ օստեոպորոզի և ճարպակալման աստիճանի որոշում՝ DEXA-օստեոդենսիտոմետրիայի մեթոդով.

— Կենսաքիմիական ախտորոշում՝ հելիկոբակտերիոզի (ստամոքսի վարակվածությունը Helicobacter pilori բակտերիայով) հայտնաբերում C13 ՈՇԹ (միզանյութի շնչառական թեստ) միջոցով.

— ԷՆՄԳ-ախտորոշում (էլեկտրոնեյրոմիոգրաֆիա) ՝ծայրամասային նյարդերի ու մկանների կառուցվածքային և ֆունկցիոնալ վիճակի հետազոտություն՝ ստիմուլյացիոն էլեկտրոնեյրոմիոգրաֆիայի մեթոդով.

— Անտրոպոմետրիա՝ մարմնի անատոմիական թերությունների (սկոլիոզ, կիֆոսկոլիոզ, կեցվածքի խախտումներ և այլն), մարմնի կազմվածքի տեսակի և ոչ օպտիմալ շարժման ստերեոտիպի հայտնաբերում՝ սոմատոսկոպիայի մեթոդով, ու նաևհարթաթության աստիճանի և տեսակի որոշում՝ պլանտոգրաֆիայի մեթոդով.

— Մանուալ ախտորոշում՝ողնաշարի, կոնքի և նրա միացումների, վերջույթների հոդերի և մկանային համակարգի ուսումնասիրությունը ողնաշարի և հոդերի շարժունակության, մկանների տարածաշրջանային անհավասարակշռության, միոգեն ձգան կետերի, տեղական ֆունկցիոնալ արգելափակումների ու հիպերմոբիլության բացահայտման նպատակով.

— Ռեֆլեքսաախտորոշում՝ օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի որոշում և դեղորայքային թեստավորում՝ Սու-Ջոկ ախտորոշման, աուրիկուլոախտորոշման, ՎՌԹ-ախտորոշման և այլ մեթոդների միջոցով.

— Հոգեբանականախտորոշում՝ հիվանդի հոգեբանական ու հուզական ոլորտի գնահատում.

— Լոգոպեդական փորձաքննություն՝ խոսքի, ձայնի, ընթերցանության և գրավոր խոսքի խանգարումների վերլուծություն: «ԱլտՄեդ» բժշկական կենտրոնի ախտորոշման ու բուժման մի շարք սարքեր, որոնքհիմնվածենհամակարգչայինտեխնոլոգիաներիվրա, իրենց տեսակով եզակի են Հայաստանումներդրվածենբացառապես «ԱլտՄեդ»կլինիկայում, այդթվում, ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ ախտորոշման «Ոսկե ստանդարտ» հանդիսացող հետևյալ ախտորոշման ժամանակակից տեխնոլոգիաները. «STRATOS» դենսիտոմետր («DMS» ընկերություն, Ֆրանսիա)

• DEXA-դենսիտոմետրիա՝«DMS» (Ֆրանսիա) ընկերության «STRATOS» ժամանակակից

«DEXA»-տեխնոլոգիայի (երկակի էներգիայի ռենտգեն աբսորբցիտոմետրիա) հիման վրա կառուցված բազմասայթային ռետգեն դենսիտոմետրը, որը թույլ է տալիս անցավ, բարցր ճշգրտությամբ օպտիմիզացված գնահատել մարմնի ուսումնասիրվող հատվածի՝ ողնաշարի, կոնքի, վերին և ստորին վերջույթների ոսկրայինհյուսվածքի

խտությունը և ախտորոշելօստեոպորոզի աստիճանը, և նաև անցկացնել «ամբողջ մարմին» ծրագիրը՝ պացիենտի մարմնի ոսկրային, ճարպային և ոչ ճարպային զանգվածի տոկոսային քանակությունը գիրության աստիճանի գնահատման համար, «օրթոպեդիկ» ծրագիրը՝ ոսկրային հյուսվածքի վիճակի գնահատում պրոթեզավորված հոդի շրջանում և «մանկական» ծրագիրը՝ 5-ամյա հասակից սկսած երեխաների հետազոտությունը: “FAN hp” անալիզատոր («Fisher» ընկերություն, Գերմանիա)

• C13 ուրեազային շնչառական թեստ (C13ՈւՇԹ) ՝ հելիկոբակտերիոզի (ստամոքսի «Helicobacter pylori» բակտերիայիվարակ) ախտորոշման հետազոտությանմեթոդ էգերմանական“FAN hp”նորագույն սարքավորումով, որը ունի զգայունության (100%), ճշգրտության (98, 5%) և հստակության (100%) բարձր մակարդակ, ինչը հնարավորություն է ընձեռում տալ հիվանդի «Helicobacter pylori» (Hp) բակտերիայով վարակման քանակական գնահատականը՝ նախքան բուժումը, բուժման ընթացքում և բուժման ավարտից հետո, այսինքն՝ դատել անցկացվող թերապիայի արդյունավետության վերաբերյալ: Սա միակ թեստն է, որը թույլ է տալիս որոշել ոչ միայն «Helicobacter pylori» բակտերիայի (որըհանդիսանում մի շարքհիվանդությունների առաջացման պատճառ, մասնավորապես գաստիրիտի, աղեստամոքսային տրակտի խոցային հիվանդությունների ուռուցքների և այլն) առկայությունը ստամոքսում ու 12-մատնյա աղիքում, այլ նաև նրանց քանակությունը:

«ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում հիվանդներին տրամադրվում է համալիր կանխարգելիչ, բուժական և վերականգնողական օգնություն՝ օգտագործելով ժամանակակից և այլընտրանքային դեղորայքային, ինչպես նաև ոչ դեղորայքային բուժման մեթոդներ.

— «Առողջ մեջք» ծրագիր՝ օստեոխոնդրոզի և միջողային սկավառակների ճողվածքների ժամանակ.

— «Առողջ կեցվածք» ծրագիր՝ սկոլիոզի, կիֆոսկոլիոզի, հարթաթաթության, ոտքերի տարբեր երկարության և թեք կոնքի համախտանիշների ժամանակ.

— «Ոչ օստեոպորոզին» ծրագիր՝ օստեոպենիայի և օստեոպորոզի ախտորոշում ու բուժում ոսկրային կոտրվածքների կանխարգելման և ցավի բուժման համար.

— «Ցավի կառավարում» («pain management») ծրագիր՝ սուր և քրոնիկ ցավերի ախտորոշում և բուժում (մեջքի ստորին մասի ցավի («low back pain») համախտանիշ, ֆանտոմ և կաուզալգիկ ցավային համախտանիշներ, գլխացավ, եռորյակ նյարդի նևրալգիա, հերպետիկ նևրալգիա, հոդերի ցավ և այլն) .

— «Ռեաբիլիտացիա» ծրագիր՝ հենաշարժական համակարգի վիրահատություններից (միջողային սկավառակի ճողվածքի հեռացում, հոդերի էնդոպրոթեզավորում և այլն), հիվանդություններից (նյարդային համակարգի հիվանդություններ, գլխուղեղի

ինսուլտ, նեյրոինֆեկցիաներ) և վնասվածքներից (հոդերի, մկանների ու ջլերի գերձգում և այլն) հետո և այլն.

— «Ոչ՝ հեպատիտին» ծրագիր՝ լյարդի քրոնիկ հիվանդությունների (գեպատոզ, վիճակ B ու C հեպատիտից հետո, Ժիլբերի համախտանիշ և այլն) ժամանակ. —

«Քաշի շտկում» ծրագիրը՝ առաջնային և երկրորդային ճարպակալման, ինչպես նաև մետաբոլիկ համախտանիշի ժամանակ ճարպակալման ախտորոշում և բուժում.

— «Երիտասարդացում» (“Anti-aging”) ծրագիր՝ մաշկի և մազերի խնդիրների ախտորոշման և բուժման նպատակով: Բացի այդ, «ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում մասնագետների բազմադիսցիպլինար թիմը իրականացնում է ախտորոշում, բուժում և վերականգնում՝ տարբեր տարածված հիվանդությունների ժամանակ.

— աղեստամոքսային տրակտի հիվանդություններ. գաստրիտ, խոլեցիստիտ, կոլիտ, պանկրեատիտ, թութք, փորկապություն, ճճվակրություն, դիսբակտերիոզ և այլն:

— էնդոկրին հիվանդություններ. շաքարախտ, թիրեոտոկսիկոզ, հիպոթիրեոզ, անպտղության, հիպերպրոլակտեմիա և այլն:

—նյութափոխանակության խանգարումներ. հավելաքաշ ու թերքաշ, դիսմիկրոէլեմենտոզ, հիպովիտամինոզ, սննդի ընդունման խանգարումներ և այլն.

—միզասեռական հիվանդություններ. դաշտանային ցիկլի խանգարումներ, դիսմենորիա, արգանդի հավելումների բորբոքում, մաստոպատիա, կլիմակտերիկ համախտանիշ, ցիստիտ, երիկամների (միզապարկի) քարային հիվանդություն, գիշերային անմիզապահություն, պրոստատիտ և այլն. — մաշկային հիվանդություններ. դերմատիտ, էկզեմա, պզուկ, մազաթափություն, մաշկի սնկային, վիրուսային ու բակտերիալ հիվանդություններ և այլն.

— ալերգիկ վիճակներ. ալերգիկ ռինիտ և կոնյուկտիվիտ, բրոնխիալ ասթմա, պոլլինոզ, սննդային ու դեղորայքային ալերգիա և այլն.

— լոգոպեդական խանգարումներ. խոսքի (աուտիզմ, լոգոնևրոզ (կակազություն), աֆազիա, դիսարտրիա, դիսլալիա և այլն), ձայնի (աֆոնիա, հնչողության խանգարումներ), ընթերցանության և գրավոր խոսքի (դիսլեքսիա, դիսգրաֆիա) և այլ խանգարումներ.

— հոգեհուզական ոլորտի խանգարումներ. նևրոզներ, դեպրեսիա, ֆոբիաներ, տարիքային ճգնաժամեր, կախվածություններ (հակում ծխախոտի ու ալկոհոլի նկատմամբ) և այլն: «ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում օգտագործվում են ժամանակակից արևմտյան գիտական տեխնոլոգիաները՝

— Կինեզիոթերապիա (բուժական ֆիզկուլտուրա) . մկանների ու հոդերի ֆունկցիայի խանգարումների բուժում՝օգտագործելով բժիշկ Բուբնովսկու բազմաֆունկցիոնալ

«ՄՏԲ» մարզասարքը (Ռուսաստան) և հոդերի հատուկ ձգումներ՝օգտագործելով«Շլիգենթիշ» (Գերմանիա) մարզասարքով:

— ԿՀԿ-թերապիայի (կենսաբանական հետադարձ կապի մեթոդ) նպատակով կիրառվում են «Բիո-Բիտտման» ու «Միոտոնիկ» (Ռուսաստան) ծրագրա-ապարատային համալիրները. հենաշարժական ապարատի հիվանդությունների ախտորոշում ու բուժում՝ էլեկտրոմիոգրամմայի (ԷՄԳ-ԿՀԿ) միջոցով, և խոսքի խանգարումների շտկում՝ սրտի կծկումների հաճախականության ու սրտի շնչարական արիտմիայի (ՍԿՀ-ՍՇԱ-ԿՀԿ) մոնիտորինգի միջոցով: ԿՀԿ-թերապիայի «Միոտոնիկ»ծրագրա-ապարատային համալիր («Բիոսվյազ» ընկերություն, Ռուսաստան)

• ԿՀԿ-թերապիա (ԿենսաբանականՀետադարձԿապ) – հետադարձ կապի սկզբունքների վրա հիմնված մեթոդների ու տեխնոլոգիաների մի համալիր է, որի նպատակն է ակտիվացնել մարմնի ներքին պահուստները, ուղեղի մակարդակով մարմնի գործառույթների ֆիզիոլոգիական համապատասխան ինքնակառավարման և ինքնակազմակերպման զարգացման ծրագրի ստեղծմամբ: Ստացված տեղեկատվության հիման վրա, օգտագործելով հատուկ տեխնիկա և սարքավորումներ հրահանգչի ղեկավարության ներքո, հիվանդը զարգացնում է ինքնակարգավորման և ինքնակարգավորման հմտությունները, այսինքն ֆիզիոլոգիական գործառույթը կամայականորեն փոխելու ունակությունը՝սկոլիոզի, հարթաթաթության և այլ պաթոլոգիական խանգարումների լուծման համար:

— Հիդրոթերապիան (ջրային բուժում) . ղեկավարելի ստորջրյա ողնաշարի ձգում (տրակցիոն թերապիա), ստորջրյա ցնցուղ-մերսում ու ողնաշարային մկանների հիդրոմերսում, օդային մերսում («պղպջակների վաննաներ») ու ֆոտոթերապիա (գույնային սպեկտրի ազդեցությունը օրգանիզմի վրա) օգտագործելով «Օրբիտա» ֆիրմայի (Ռուսաստան) «Ակվատրակցիոն» բազմաֆունկցիոնալ հիդրոմերսման համալիրը:

«Ակվատրակցիոն» սարքավորում ողնաշարի ձգման և ստորջրյա հիդրոմերսման համար («ORMED» ընկերություն, Ռուսաստան)

•«Ակվատրակցիոն»-ը բազմաֆունկցիոնալ ջրամերսման համալիր սարքավորում է, որը թույլ է տալիս իրականացնել ողնաշարի վերահսկվող ստորջրյա երկարաձգում, հարողնաշարային (պարավերտեբրալ) մկանների ստորջրյա մերսում, ջերմ օդով ստորջրյա օդամերսում («մարգարիտ վաննաներ»), ստորջրյա ցնցուղ-մերսում, հիդրոօդամերսում «Magic» վարդակներով և քրոմոթերապիա (ազդեցություն մարդու մարմնի վրա գույնի սպեկտրի միջոցով):

Ստորջրյա երկարաձգման թերապիան ստորջրյա հիդրոմերսումով՝ հենաշարժական համակարգի բուժման ամենաարդյունավետ մեթոդներից մեկն է միջողային սկավառակի ճողվածքի ժամանակ:

—Բուժական դեղորայքային շրջափակում.պարավերտեբրալ, հաղորդչական և տեղային պաշարում, պլազմոլիֆտինգ, PRP (Platelet Rich Plasma) թերապիա և այլն.

— Ֆիզիոթերապիա. ինհալյացիա, էլեկտրոֆորեզ, դարսոնվալիզացիա, ուլտրաձայնային թերապիա, մագնիսոթերապիա, լազերային թերապիա և այլն:



Մերսում — Մերսում. դասական, սեգմենտար, կետային, վակուումային և անուշաբույր յուղերով: —Դիետոլոգիա/նուտրիցիոլոգա.ռացիոնալ դիետայի նշանակում և պրոբիոտիկների, նուտրիցեվտիկների և պարաֆարմացեվտիկների կիրառում:

—Հոգեթերապիա. պոզիտիվ հոգեթերապիա, անհատակենտրոն թերապիա, արտ-թերապիա, նեյրոլեզվական ծրագրավորում, հոգեդրամա:

— Լոգոպեդական շտկում.խոսքի, ձայնի, ընթերցանության և գրավոր խոսքի խանգարումների: «ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում օգտագործվում է նաև արևելյան բժշկության դարերի փորձը՝

— Ֆիտոթերապիա (բուսաբուժություն- բուժում բուժիչ դեղաբույսերով) .

— Արոմաթերապիա (բուժում անուշաբույր յուղերով) .

— Մանուալ թերապիա (բուժում ձեռքով ախտորոշիչ և բուժական մեթոդների կիրառմամբ՝ ուղղված հենաշարժական համակարգի և մարդու ներքին օրգանների փոփոխությունների ուղղմանը) .

— Հոմեոպատիա (հիվանդությանըառավել շատ նման փոքր դոզաներում դեղերի օգտագործմամբ բուժման մեթոդ) .

Չինական ասեղնաբուժություն

— Ռեֆլեքսոթերապիա (ասեղնաբուժություն – մարմնի մակերեսի որոշ տարածքների՝ այսպես կոչված «կենսաբանական ակտիվկետերի» խթանման (մեխանիկական, ջերմային և այլն) հիմանվրաբուժմանմեթոդ) .

Տզրուկաբուժություն

— Հիրուդոթերապիա (բուժում բժշկական տզրուկներով) .

— Կավաբուժություն (բուժում օգտագործելով կավը) .

— Ապիթերապիա (բուժում մեղվաբուծական արտադրանքի և մեղուի խայթելու միջոցով)։ Անհատական մոտեցման արդյունքում«ԱլտՄեդ» վերականգնողական և ավանդական բժշկության կենտրոնում արդեն շուրջ 17 տարի իրական օգնություն են ստացել ու շարունակում են ստանալ հազարավոր մարդիկ։ «ԱլտՄեդ» վերականգնողական և ավանդական բժշկության կենտրոնը դա որակյալ և զգայուն բժիշկներ են, դա ժամանակակից և այլընտրանքային ախտորոշման և թերապիայի մեթոդներ են, դահամալիր ինտեգրված բժշկական խնամք է, դա անհատական մոտեցում է յուրաքանչյուր հիվանդի համար։

Հիվանդների բուժման հաջողության գրավականը«ԱլտՄեդ» բժշկական կենտրոնի ղեկավարներ Մկրտիչ Ավագյանի և նրա որդու՝ Վահան Ավագյանի մատնանշմամբ, ժամանակակից արևմտյան և ավանդական արևելյան բժշկության համակցությունն է, դեղորայքային և ոչ դեղորայքայի նբուժման զանազան եղանակների լավագույն զուգակցման անհատական ընտրությունը, ինչպես նաև հիվանդի առողջական վիճակի մշտական վերահսկողությունը հոգատար մասնագետների կողմից։ Հնագույն բժիշկները թողել մի շարք պահանջներ, որոնք կարելի է համարել օպտիմալ բուժման չափանիշներ՝«cito, tuto, jucunde» («արագ, արդյունավետ, հաճելի»)։

«ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում միշտ ձգտում են իրականացնել այդ կոչերը, և հասել է այդ ուղղությամբ զգալի հաջողությունների։ «ԱլտՄեդ» բժշկական կենտրոն դիմում են նրանք, ովքեր լուրջ են մոտենում իրենց առողջական խնդիրներին, ում

հիվանդությունը ճշգրիտ չի ախտորոշվել, կամ ով լիարժեք չեն ապաքինվել, քանի որ այս բժշկականկենտրոնի մասնագետները գիտեն ինչպես պետք է կանխել և բուժել շատ հիվանդություններ:

Բարի գալուստ «ԱլտՄեդ»բժշկական կենտրոն 0052, ՀՀ, Երևան, Քանաքեռ, Է. Հասրաթյան փ. 9, Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ Հեռ ./Ֆաքս. + (374-10) – 239787 Հեռ. Բջջ. + (374-91) – 421002 Էլ.փոստ: info@altmed.am Կայք: http: //www.altmed.am